07.09.23 - 16.09.23
09:00
Անցանց
Գրանցումը բաց է
☑

Պահպանել Google օրացույցում

Ս.թ. սեպտեմբերի 15-ին Երևանի պետական համալսարանում տեղի կունենա նոր ուսումնական տարվա մեկնարկին և առաջինկուրսեցիների ընդունելությանը նվիրված **«105-ՐԴ ԲԱՐԵՎԸ»** միջոցառումը: Միացե՛ք այս մեծ տոնակատարությանը, և եկեք միասին ազդարարենք առաջինկուրսեցիների ուսումնական ճամփորդության սկիզբը:

Միջոցառման նպատակն է ծանոթացնել ուսանողներին համալսարանի ընձեռած արտաուսումնական բազմաթիվ հնարավորություններին և օգնել նրանց ստանալ իրենց հետաքրքրող բազմաթիվ հարցերի պատասխաններ: Սա բացառիկ հնարավորություն է հանդիպելու և շփվելու համակուրսեցիների ու այլ ուսանողների, դասախոսների և համալսարանական անձնակազմի հետ:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ «105-ՐԴ ԲԱՐԵՎԸ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«105-րդ ԲԱՐԵՎԸ» տոնակատարության ընթացքում նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

1. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ԵՊՀ տարբեր ստորաբաժանումներ կներկայացնեն իրենց գործունեությունը, առաջարկվող հնարավորությունները և կպատասխանեն ձեզ հետաքրքրող հարցերին։

Հնարավորությունների ցուցահանդեսի ընթացքում՝

- լինելու են հետաքրքիր սիմուլյացիոն խաղեր, վիկտորինաներ և մրցույթներ, արագ դասընթացներ,
- անցկացվելու է ուսանողների և դասախոսների համար նախատեսված քվեսթ,
- ելույթ է ունենալու YSU Band-ը,
- անմիջապես տեղում դուք հնարավորություն կունենաք գրանցվելու և հետագայում մասնակցելու ԵՊՀ ստորաբաժանումների կողմից իրականացվող տարբեր ծրագրերի, մշակութային միջոցառումների ու դասընթացների։

Միջոցառմանը ներկայացված են հետևյալ ստորաբաժանումները՝

- Ուսումնամեթոդական վարչություն,
- Գիտական քաղաքականության վարչություն,
- Շարունակական կրթության կենտրոն,
- Կարիերայի և շրջանավարտների կենտրոն,
- Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոն,
- Լ. Ղարիբջանյանի անվան պատմության թանգարան,
- Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոն,
- Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան,
- Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն,
- Ուսանողական խորհուրդ,
- Ուսանողական գիտական ընկերություն,
- Մարտական պատրաստության ակումբ,
- Մարքեթինգի բաժին։

Ամբողջ միջոցառման ընթացքում լինելու են լուսանկարահանման անկյուններ (ֆոտոզոնաներ) և 360 աստիճան պտտվող ձևաչափով վիդեոնկարահանման հատվածներ։ Լիովին անվճար կկարողանաք ֆիքսել համակուրսեցիների հետ ձեր լավագույն ակնթարթները։

2. ՌԵԿՏՈՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Նոր ուսումնական տարվա մեկնարկը և առաջինկուրսեցիների մուտքը համալսարան կողջունի ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը։

3. ՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ

Օրվա լավագույն ամփոփումն ու բարձր տրամադրությունը կապահովեն «NEMRA» և «By The Way» երաժշտական խմբերը։

ՈՎՔԵ՞Ր ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

- **Բոլոր ուսանողները.** միջոցառումը նախատեսված է ոչ միայն առաջինկուրսեցիների, այլև բարձր կուրսերի ուսանողների համար,
- **դասախոսները և տարբեր ստորաբաժանումների աշխատակիցները,**
- **շրջանավարտները։**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am